

ՍՓԻՒՔԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ, ԱԶԱՏԱԳՐՈՒՄ ՕԼԻԳԱՐԽ ՌԵՋԻՄԸ

Posted on August 25, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



23 Օգոստոս 2021

Ստորել կը վերահրատարակենք լիբանանահայ յանդուզն մտաւորական Մեթր Գասպար Տերտերեանի ուշագրաւ ճառը, ուր կը ցոյանայ նորօք հանգուցեալ հրապարակախօսին, հրապարակագրին, ազգային-հասարակական անբիծ մտաւորականին ամբողջական պատկերը: Յաւերժ փառք իր անմեռ յիշատակին: Խմբ.

Մեթր Գասպար Տերտերեան, Պէյրուզ, 27 Նոյեմբեր 2015

Գեղարդի ընթերցողներու ուշադրութեան կը յանձնենք լիբանանահայ անգուզական մտաւորական, բազմաթիւ տասնամեակներու համալիբանանեան առումով քաղաքական ղեկավար Մեթր Գասպար Տերտերեանի ներքոյիշեալ ճառը արտասանուած Հայկական Սովետական Խորհրդային Հանրապետութեան 95-րդ տարեդարձին առիթով:- Խմբ.

For English translation visit [Diaspora's Reorganization, Liberation from Oligarch Regime](#)

Յարգարժան բարեկամներ,

Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան 95-րդ **փառայուշ** տարեդարձին առիթով, մեր այս համեստ ընթրիքը պիտի չունենայ **տօնական** մթնոլորտ, Համահայրութեան այսօր պարզած տխուր վիճակին պատճառով, որ մեզ կը ստիպէ **խորհրդածելու**, որպէսզի՝ կարենանք գտնել եւ ըմբռնել թէ՛ ինչ կը պատգամեն մեզի այսօր, Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցն ու Նոյեմբեր 29-ի 95-րդ տարեդարձը:

Պիտի մեջբերեմ **մէկ** կոմունիստական դիտարկում եւ **երեք** դաշնակցական դիտարկումներ, որոնք կը հաստատեն՝ մէկը, կոմունիստականը: Իտալիոյ Կոմկուսի ղեկավարներէն Անթոնիօ Կռամչին դիտարկած է՝

«Երբ **հին** ռեժիմ մը կը մահանայ, եւ **աւելի լաւ նորը կ'ուշանայ** ծնելու, այս միջոցին գոյացած խաւարին մէջ՝ հրապարակը կը գրաւեն **գազաններու** ուրուականներ»:

Այսպէս եղաւ սովետահայ ռեժիմի լուծարումի վաղորդայնին: Աւելի լաւ ռեժիմ մը ուշացաւ ծնելու եւ՝ օլիգարխներու գազանախումբը գրաւեց հրապարակը, **հայաթափեց** ու **թալանեց** երկիրը եւ հայրենիքը դրաւ **ինքնալուծարումի** ստոյգ վտանգին առջեւ:

Կռամչիի կանխագուշակած գազաններուն գործած աւերին մասին ահա՛ երեք ղեկավար դաշնակցականներու հաստատումները.-

ՀՅԴ Բիւռոյի անդամ Մկրտիչ Մկրտիչեան, 2012-ին, «ԴՐՕՇԱԿ»ի մէջ գրեց՝

«Հայաստանը՝ իր պետութեամբ եւ ժողովուրդով, այսօր կ'ապրի **լուռ տագնապ** մը, որ յատուկ է հասարակութիւններուն, որոնք **հիասթափուած են**, այդ հիասթափութեան պատճառներուն **հարկադրաբար համակերպած են** (փոխանակ այդ պատճառները վերացնելու համար պայքարելու)

Եւ այդ կրակորական **համակերպումին** պատճառով ալ, **ամլացած են** (կորսնցուցած ըլլալով իրավիճակի փոփոխութեան ամեն յոյս), եւ դանդաղ քայլերով կ'առաջնորդուին դէպի **ինքնալուծարում**: Եթէ՝ տակաւին գոյ է առողջ կորիզ մը, որ շրջադարձի միակ յոյսը կրնայ ըլլալ, պայմանաւ՝ որ այդ կորիզը՝ նախ ինք գիտակցի տիրող անմիջական վտանգներուն, որոնք կը սպառնան ոչ միայն պետութեան, այլեւ ազգի ֆիզիքական գոյութեան, եւ որոշէ՝ փոխել իրադրութիւնը»:

Եւ քանամեակ մը առաջ, 1993-ին իսկ, Էդիկ Յովհաննիսեան «ԴՐՕՇԱԿ»ի մէջ հարց կու տար՝ «Ո՞ր ենք գտնուում մենք»: Եւ կը պատասխանէր՝ «**Դաշնակիցներ** շահելու համար, մենք պետք է ունենանք **քաղաքական յստակ դիրքորոշում**, փոխանակ հետեւելու կոմպլեմենտար կոչուող լարախաղացութեան արքունի դիւանագիտութեան, ասելով թէ՛ մենք հիմա **անկախ ենք** եւ լաւ յարաբերութիւնների մէջ ենք եւ գործակցում ենք թէ՛ ամերիկացիների եւ թէ՛ ռուսների հետ: Պետք է գիտակցել, որ միայն Ռուսաստանի ազգային շահերի ոլորտում է, որ Հայաստանը **որոշ հետաքրքրութիւն** է ներկայացնում Ռուսաստանի համար: Ելցինի **ամերիկանացած** ու **ոչ-ազգային** Ռուսաստանի համար՝ Հայաստանը ոչ մի հետաքրքրութիւն չի ներկայացնում: Մեզ չխաբենք ճառելով թէ՛ մենք հիմա **անկախ ենք եւ կարող ենք սեփական ուժերով** պաշտպանել մեր հայրենիքը: Աշխարհը շարժւում է դէպի **ազգային պետութիւն**: Հաւանաբար մօտիկ ապագայում՝ Չինաստանը, Ճապոնիան, Գերմանիան եւ Ռուսաստանը դառնան **ազգային պետութեան բեւեռ**ի պաշտպանները, եւ՝ **ջախջախիչ հարուած տան՝ ամերիկասիոնական ապագային բեւեռին**: Ազգային բեւեռի յաղթանակը անխուսափելի է, քանզի **ապագայնացուած** աշխարհը սուզուել է **անբարոյականութեան** ծովում, որից յետոյ կը խորտակուի վերջնականապէս: Հետեւաբար, մեր ներկայ կացութիւնը ստիպում է մեզ՝ **կանգնել պատնէշի ազգային կողմում** կանգնած բանակի շարքերում, եւ առաջին հերթին **Ռուսաստանի ազգային շահերի շարքում**»



Հազի

Լ տասնամեակ մը անց, մեծ մասամբ իրականացաւ Է. Յովհաննիսեանի կանխագուշակումը: Չինաստան եւ Փութինեան Ռուսաստան դարձան ազգային պետութեանց **բազմաբեւեռ** աշխարհակարգի պաշտպաններ՝ ամերիկա-սիոնական ապազգային **միաբեւեռ** աշխարհակարգին դէմ, կազմակերպելով Շանկիայի Համագործակցութեան Ուխտը եւ BRICS-ի ճակատը՝ Պրագիլիոյ, Ռուսաստանի, Հնդկաստանի, Չինաստանի եւ Հարաւային Ափրիկէի մասնակցութեամբ: Եւ՝ պարզէն ալ պարզ դարձաւ, որ Հայաստան պետք է կանգնի **բազմաբեւեռ** աշխարհակարգի շարքերուն մէջ, ուր եւ կը գտնուին Ռուսաստանի ազգային շահերը: Հայաստանի լինելութեան սպառնացող մեծագոյն վտանգը՝ **փանթուրքիզմն** է, զոր կ'որոճան այսօր Երտողանեան Թուրքիան եւ Ալիեւեան Ատրպէյճանը, եւ այս վտանգը միաժամանակ ուղղուած է Ռուսաստանի ազգային շահերուն դէմ: Եւ՝ Ռուսաստանի եւ Հայաստանի ազգային շահերու այս **համընկնումն** է, որ հիմքը կը կազմէ Հայ-Ռուս ստրատեգիական դաշինքին: Մինչդէռ, Հայաստանի օլիգարխիական ապազգային ռեժիմը դեռեւս կը շարունակէ սիրաբանիլ ամերիկա-սիոնական ապազգային բեւեռին հետ՝ վտանգելով Հայ-Ռուս դաշինքը: Եւ ներկայիս, օլիգարխիական ռեժիմը՝ սահմանադրական փոփոխութիւններու անուան տակ, կ'ուզէ որդեգրել Եւրոխորհուրդի Վենետիկեան փոփոխութիւնները, որոնք կը սպառնան **ապազգային** պետութեան վերածել Արեւելահայաստանը:

Այս ապազգային ռեժիմն է, որ արգելք հանդիսացաւ, որ 100-րդ տարելիցը դառնայ **անկիւնադարձ մը**, հրաժարելով՝ Ցեղասպանութեան **լոկ բառյական ճանաչումի**

պահանջատիրություն, եւ որդեգրելու՝ **հողային** պահանջատիրությունը: Արգելք եղաւ, որպէսզի չբարկացնէ ՕԹԱՆ-եան Թուրքիոյ դաշնակից ամերիկա-սիոնական ապագային բեւեռը...: Եւ տակաւին այս ապագային ռեժիմն է, որ ուրացաւ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան կառուցած վեհաշուք ու սիգապանծ Ծիծեռնակաբերդի Յուշակոթողն անգամ, եւ 100-րդ տարելիցի որպէս խորհրդանշան պարտադրեց սիոնա-մասոնական անմոռուկը... անհանգստացնելով մեր 1.5 միլիոն նահատակներուն ոսկորտիքը, քանզի՝ Մեծ Եղեռնը գործադրած Երիտթուրքերը՝ սիոնա-փանթուրքական վոհմակներ էին, եւ փանթուրքիզմի ծրագրի հեղինակներն էին հրեայ սիոնական պատմաբաններ:

Յակոբ Պալեան, Երրորդ դաշնակցական մտաւորականը, 2015 թ. Ապրիլին, գրեց «ԱԶԴԱԿ»ի մէջ հետեւեալ դիտարկումը.

«Հարիւրամեակը՝ ազգային որակի եւ **ազգային ոգիի վերականգնումի յեղափոխութեան առիթ պէտք էր որ ըլլար**, փոխանակ՝ զայն վերածելու **օլիգարխիական** տօնահանդէսի»:

Արեւելահայաստանը բռնազաւթած օլիգարխիական ռեժիմը ոչ միայն հայաթափեց հայրենիքը եւ թալանեց երկրի ստորգետնեայ բնական հարստութիւններն ու վերգետնեայ սովետաշէն ազգային տնտեսամշակութային կառոյցները, այլեւ՝ բռնագրաւեց 100-րդ տարելիցի եզակի առիթը, եւ զայն վերածեց **օլիգարխիական** ապագային մեծափոմփիւն «**ՇօՆԼ**»ի, եւ ինք խմբագրեց ու ինք արտասանեց «Հայոց Ցեղասպանութեան 100-րդ Տարելիցի Համահայկական Հռչակագիր» կոչուած աժան բարոյախօսութեան անբովանդակ փաստաթուղթը, որ բնա՛ւ **համահայկական** չէ, քանի որ չարտայայտեց՝ ոչ Տարագիր Արեւմտահայութեան եւ ոչ ալ՝ հայրենի մնացորդացի լուռ մեծամասնութեան կարծիքն ու պահանջը հիմնական՝ հողայինը, այլ՝ որպէս բիզնես-գոյքային մտածելակերպի մարմնացումը հանդիսացող ապագային ռեժիմը, խօսեցաւ միայն **գոյքային հատուցումի** մասին, **հողային** հատուցումին փոխարէն:

Անթոնիօ Կռամշիի յիշած, բայց հիմա արդէն հայանուն գազաններու բիզնես-գոյքային աչքծակութիւնը այնքան արմատակալած է իրենց մօտ (ի դէպ՝ ասոնց բնութագիրը ճշգրտօրէն կու տար անգուգական հայրենասէր գիտնականը՝ Արամայիս Միրզախանեան, այժմ հանգուցեալ, երբ ասոնց կը վերագրէր մոնկոլ-թաթարական նկարագիր), որ երեւանեան մամուլը գրեց. «Հայ զինծառայողը **պայթել** է ականի վրայ, **կորցրել է ոտքը**, բայց, նրան ստիպել են՝ գոյքը փճացնելուն համար՝ **վճարել ականի գինը**»

Բայց ինչու ընդվզիլ՝ երբ այս ռեժիմը գոյք-ականի գինը հայ զինուորի կորսնցուցած ոտքին գինէն աւելի կարելոր նկատած է, քանզի նոյնիսկ Ցեղասպանութեան Թանգարանի տնօրէնի պաշտօնին՝ օլիգարխներու դրածոն՝ ոմն հայանուն Հայկ Դեմոյեանը, 100-րդ տարելիցի նաեւ 100 հոգինոց վերին մարմնի նախագահը,

դարադարձի առիթով խօսած իր ճառին մեջ, յիշեց միայն **գոյքային** հատուցումի մասին, եւ ոչ մէկ բառ արտասանեց **հողային** հատուցումի կապակցութեամբ: Եւ՝ Հայ Սփիւռքի աւանդական առաջնորդներն ալ՝ ստրկական համակերպումով, այս ռեժիմի գազաններուն դիմաց, լեզունին կլլեցին եւ չարծարծեցին հողային պահանջատիրութեան հարցը կամ՝ Տարագիր Արեւմտահայութեան Համաշխարհային Քոնկրետի անյետաձգելի դարձած ինդիորը, ոտնահարելով Տարագիր Արեւմտահայութեան կամքը:

Սփիւռքի եւ Հայաստանի ներկայացուցած այս տխուր իրավիճակին մեջ, **արտաքին ճակատի** վրայ ամէն նախաձեռնութենէ առաջ՝ հարկ է զօրացնել Հայութեան **ներքին ճակատը**, իրականացնելով հիմնական ու հրամայական երկու առաջադրանքներ.

- 1) Անյապաղ ձեռնարկել Սփիւռքի վերակազմակերպումին՝ ՏԱՀՔ-ի կառոյցին մեջ, եւ հողային պահանջատիրութեան մեկնարկումին:
- 2) Անյապաղ ձեռնարկել՝ Հայաստանը օլիգարխիական ռեժիմէն ազատագրելու պայքարին, հոն հաստատելու համար Սովետ Հայաստանի թոյլ տուած թերիները սրբագրող, բայց, միեւնոյն ժողովրդահայրենասիրական ազգային դպրոցին պատկանող ռեժիմ մը, որպէսզի՝ կարելի դառնայ փրկութիւնը Հայաստանի եւ Արցախի:

Լիբանանահայ Գրական Շրջանակի համոզումով՝ այս երկու անյետաձգելի հրամայականները կը խտացնեն՝ Մեծ Եղեռնի դարադարձի եւ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան 95-րդ տարեդարձի պատգամը մեզի:

